

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

**Ռելիկտային տեսակ:** *Սրանք բույսերի, անկերի և կենդանիների տեսակներ են, անցած դարաշրջանների բուսական և կենդանական աշխարհի քիչ փոփոխված կամ նույնությամբ պահպանված ներկայացուցիչներ: Հայաստանի Հանրապետության «Գիհի-կաղնուտային ռելիկտային» արգելավայրը գտնվում է Սևան ազգային պարկի արևելյան մասում և տարածվում է Սևանա լեռնաշղթայի հարավ- արևմտյան լանջերին, Դարանակ գյուղից մինչև Ջիլ գյուղ՝ մոտ 18 կմ երկարությամբ և 1.5–3.8 կմ լայնությամբ: Արգելավայրը զբաղեցնում է 1807 հա մակերես: Տարածքը կտրտված է, հանդես են գալիս տարբեր չափերի 5 հատվածներ, որոնց սահմանների ընդհանուր երկարությունը կազմում է 55.0 կմ: Արգելավայրի էկոլոգիական նպատակն է ապահովել գիհու և կաղնու անցած դարաշրջանների բնական անտառների պահպանությունը:*